քերն յայտնի կերևին, սակաւ ինչ մնացորդներն ևս կարևորութենէ զուրկ չեն։

Կոշտ տապանաքարերն 3—4 հազար կան, որք մեծ մասամբ անծանօթ են ժողովրդեան։

Գերեզմանատան միջէն ճանապարհ մի անցած է, աջ ու ձախ բաժանուած է գերեզմանատունս։

Այս ճանապարհի վերայ եկեղեցւոյ մի որմի հիմնաքարերը կերևին, ըստ աւանդութեան հռչակաւոր Ս. Կիրակոսի վանքն էր սա և հրաշագործ։ Արջ մի կը ծառայէր այս վանքին և հայ երբ թխուէր, տաք տաք կը հասցնէր Ս. Վարդեհէր եղած միաբանութեան. որով այդ տեղ գտնուած միաբանութիւնը որ տարւոյն մեծ մասն ձեան կոյտերու միջավայրը կը մնայր, անխամ չմնայ [1]։

Այս եկեղեցւոյ հարաւն քիչ հեռի, կայ մի առատաբուխ և սառն աղբիւր, որ կընկնի գերեզմանատան արևմտեան հարաւային եզրն։ Ամրան ժողովուրդն այս աղբիւրից խմելու ջուր կը բերեն էշերով։ Համբարձման սորա մօտ կը հաւաքուի ժողովուրդը, կը պարեն, ձի կը խաղցնեն, և դարնան ամեն կիւրակէ զբօսավայր է։

Գերեզմանատան աղբիւրի քիչ բարձրն, եկեղեցւոյ և աղբիւրի միջավայրը կայ մի քարակոյտ, որ Կոյս Խանումի Նշխարաց վայրն է, որ 1730—35 թուականներուն նահատակուած է անտանելի չարչարանօք։

Գերեզմանատանս ամենաբարձր դիրքի վերան կանգ-

---

1. Սրբոյն Թադէոսի և Վարոսի վանքը Վիշապաձորն է, պատմութենէ կերևի թէ որոյ կալուածներն Բագրևանդայ էին, մէջ սահմանէն մի ժամ ի հիւսիս կընկնի, է մեծ ուխտատեղի, Վարդավառին ամեն կողմէ ուխտաւորներ կը հաւաքուին,